Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 2021-2022 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ

Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) «Մաթևոսյան կրթավճար» ծրագրի շրջանակում Երևանի պետական համալսարան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան և նրանց մասնաճյուղերն ընդունված **սոցիալապես անապահով, բարձր առաջադիմություն ցուցաբերած, բակալավրի առկա բաժնի առաջին կուրսեցիների** համար հայտարարում է մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել այն ուսանողները, ովքեր.

ա) **ընդունվել են.**

ԵՊՀ- մաթեմատիկայի և մեխանիկայի, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, քիմիայի, ֆարմացիայի, կենսաբանության, միջազգային հարաբերությունների /քաղաքագիտություն, հանրային կառավարում/, սոցիոլոգիայի /սոցիալական աշխատանք/, փիլիսոփայության և հոգեբանության /հոգեբանություն/, հայ բանասիրության, աշխարհագրություն և երկրաբանություն / սերվիս / և ժուռնալիստիկայի, եվրոպական լեզուների և հաղորդակցության/ միայն թարգմանչական գործ/ ֆակուլտետներ:

ՀՊՏՀ- ֆինանսական, ինֆորմատիկայի և վիճակագրության, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետներ:

ՀԱՊՀ- տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի, էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտներ, կիրառական մաթեմատիկայի և ֆիզիկայի, ընդերքաբանության և մետալուրգիայի ֆակուլտետներ, մեխանիկամեքենաշինական, տրանսպորտային համակարգերի և դիզայնի ինստիտուտ (ավիացիոն և հրթիռային տեխնիկա):

ՀԱԱՀ- ագրոբիզնեսի և շուկայաբանության, տնտեսագիտական, անասնաբուժական և անասնաբուժական բժշկագիտության, ագրոնոմիկայի ֆակուլտետներ:

ՀՊՄՀ- հատուկ կրթության, կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ/հոգեբանություն, սոցիալական աշխատանք, սոցիալական մանկավարժություն/:

բ) ունեցել են բարձր առաջադիմություն դպրոցում, միասնական քննությունները հանձնել են լավ կամ գերազանց գնահատականով և ընդունվել ուսուցման վճարովի համակարգ,

գ) սոցիալապես անապահով ընտանիքներից են,

դ) պարտավորվում են ուսման ավարտից հետո նվազագույնը 4 տարի ապրել և աշխատել Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախում,

ե) առավելություն կտրվի միասնական քննություններից բարձր գնահատական ստացած դիմորդներին:

Վերոհիշյալ պայմաններին համապատասխանող ուսանողները պետք է քննությունների ավարտից հետո, **2021թ. օգոստոսի 1-ից 15-ը** ներառյալ ք. Երևան, Մովսես Խորենացի 22 հասցեում գտնվող ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ ներկայացնեն, կամ էլ. փոստով edik.karapetyan@far.am; mane.khachatryan@far.am; ուղարկեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում (ձևը ստանալու համար կարող եք դիմել վերոհիշիալ հասցեներով կամ ՀՕՖ-ի ֆեյսբուկյան էջին **facebook/ Farusa (Fund for Armenian relief)**
- անձնագրի պատճեն,
- 1 լուսանկար (3x4 սմ չափսի),
- միջնակարգ կրթության վկայականի պատճեն,
- միասնական քննությանների գնահատականի մասին տեղեկանք,
- ԲՈՒՀ ընդունվելու մասին հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակի պատճեն,
- ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանք (առկայության դեպքում),
- տեղեկանք ծնողների աշխատավայրից՝ նրանց աշխատանքի և աշխատավարձի վերաբերյալ,եթե չեն աշխատում՝ տեղեկանք զբաղվածության տարածքային կենտրոնից կամ աշխատանքային գրքույկի պատճենը պարզաբանումով ներկա զբաղվածության կամ չաշխատելու պատճառի մասին:
- հակիրճ ինքնակենսագրություն՝ նշելով, թե ինչու եք դիմել տվյալ ծրագրին:

Թերի փաստաթղթերը չեն դիտարկվի:

Շահառուների ընտրությունը տեղի է ունենալու 2 փուլով.

1. Ներկայացված փաստաթղթերի դիտարկում
2. Առցանց հարցազրույց դիմումատուի և ընտանիքի անդամների ներկայությամբ:

Ծրագրում ուսանողի ընդգրկման որոշումը կայացնելու է ՀՕՖ-ի կրթական ծրագրերի հանձնաժողովը **օգոստոսի 24-ից 31ը :**

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 060526660 հեռախոսահամարով:

ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ